ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2020-2022թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (փետրվար ամսվա վերջի դրությամբ)









2022թ. փետրվարի 28-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 495.4 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ 1.5%-ով, 2021թ. փետրվարի 28-ի նկատմամբ նվազելով 2.4%-ով, իսկ 2020 թվականի փետրվարի 29-ի նկատմամբ աճելով 27.8%-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4 տրիլիոն 265.4 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 1.3%-ով, 2021թ. փետրվարի 28-ի նկատմամբ նվազելով 1.8%-ով, իսկ 2020թ. փետրվարի 29-ի նկատմամբ աճելով 29.8%-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 230.1 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 4.7%-ով, 2021թ. փետրվարի 28-ի նկատմամբ նվազելով 13%-ով, իսկ 2020թ. փետրվարի 29-ի նկատմամբ նվազելով 0.9%-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 9 մլրդ 324.3 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.1%-ով, 2021թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ 6.9%-ով, իսկ 2020թ. փետրվարի 29-ի նկատմամբ՝ 26.9%-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 8 մլրդ 847.1 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.9%-ով, 2021թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ 7.6%-ով, իսկ 2020թ. փետրվարի 29-ի նկատմամբ՝ 28.9%-ով,

6) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 477.2 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 4.3%-ով, նվազելով 2021թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ 4.7%-ով, իսկ 2020թ. փետրվարի 29-ի նկատմամբ նվազելով 1.7%-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 975.5 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.1%-ով, նվազելով 2021թ. փետրվարի 28-ի նկատմամբ 10.6%-ով, իսկ 2020թ. փետրվարի 29-ի նկատմամբ աճելով 18.4%-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1 տրիլիոն 289.9 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 4.2%-ով, 2021թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ 27.2%-ով, իսկ 2020թ. փետրվարի 29-ի նկատմամբ՝ 66.8%-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 230.1 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 4.7%-ով, 2021թ. փետրվարի 28-ի նկատմամբ նվազելով 13%-ով, իսկ 2020թ. փետրվարի 29-ի նկատմամբ նվազելով 0.9%-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 6 մլրդ 171.6 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.3%-ով, 2021թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ 2.1%-ով, իսկ 2020թ. փետրվարի 29-ի նկատմամբ աճելով 17.6%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 2 մլրդ 675,5 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3.8%-ով, 2021թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ 39.3%-ով, իսկ 2020 թ. փետրվարի 29-ի նկատմամբ՝ 65.6%-ով,

12) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 477.2 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 4.3%-ով, նվազելով 2021թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ 4.7%-ով, իսկ 2020թ. փետրվարի 29-ի նկատմամբ նվազելով 1.7%-ով:

ԱԺԲԳ









ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2022թ. փետրվարի 28-ի դրությամբ կազմել է 4 մլրդ 438.2 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.96%-ով, 2021թ. փետրվարի 28-ի նկատմամբ՝ 4.1%-ով, իսկ 2020թ. փետրվարի 29-ի նկատմամբ աճելով 4.1%-ով:

2022թ. փետրվարի 28-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում՝

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 77.73%, ինչը ավել է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 0.35 տոկոսային կետով, 0.3 տոկոսային կետով ավել է 2021թ. փետրվարի 28-ի ցուցանիշից և 2.23 տոկոսային կետով ավել է 2020թ. փետրվարի 29-ի ցուցանիշից,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 21.9%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 0.34 տոկոսային կետով, 2021թ. փետրվարի 28-ի համեմատությամբ պակաս է 0.24 տոկոսային կետով, իսկ 2020թ. փետրվարի 29-ի համեմատությամբ պակաս է 2.13 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.37%, այսինքն հավասար է 2022թ. դեկտեմբերի դեկտեմբերի 31-ի ցուցանիշին, 2021թ. փետրվարի 28-ի ցուցանիշից պակաս է 0.06 տոկոսային կետով, իսկ 2020թ. փետրվարի 29-ի ցուցանիշի համեմատությամբ պակաս է 0.1 տոկոսային կետով:

2022թ. հունվար-փետրվարին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված՝

1) տոկոսավճարները կազմել են 15.59 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 4.07 մլրդ դոլարով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 3.96 մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 4.48 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 1.23 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 0.49 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 11.11 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 5.3 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 4.45 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



2022թ. հունվար-փետրվարին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 41.55 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 329.78 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 14.7 մլրդ դրամով,

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 55.14 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 47.18 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է 16.87 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է -13.59 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 376.96 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 2.17 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2022թ. հունվար-փետրվարին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 9.5 մլն դոլար տոկոսավճար, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 14.1%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 32.1%-ով,

2) արտաքին վարկերի սպասարկման նպատակով մարվել է 35.39 մլն դոլարի մայր գումար, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 7.9%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է 1%-ով,

3) ստացվել են 7.04 մլն դոլարի վարկային միջոցներ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 24.9%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 39.6%-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 42.43 մլն դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 11.3%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 10.5%-ով:

ԱԺԲԳ

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %



2022թ. փետրվարի 28-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 1 տրիլիոն 272.8 մլրդ դրամ, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի, 2021թ. փետրվարի 28-ի և 2020թ. փետրվարի 29-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 63.8, 303.2 և 556.6 մլրդ դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3684 օր, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 77 օրով, 2021թ. փետրվարի 28-ի համեմատությամբ՝ 258 օրով, իսկ 2020թ. փետրվարի 29-ի համեմատությամբ ավել է 39 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2022թ. փետրվարի 28-ի դրությամբ կազմել է 4.79%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշի համեմատությամբ ավել է 0.11 տոկոսային կետով, 2021թ. փետրվարի 28-ի համեմատությամբ ավել է 0.57 տոկոսային կետով, իսկ 2020թ. փետրվարի 29-ի համեմատությամբ պակաս է 0.08 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2022թ. փետրվարի 28-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 1.06%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 0.14 տոկոսային կետով, 2021թ. փետրվարի 28-ի համեմատությամբ մեծ է է 0.05 տոկոսային կետով, իսկ 2020թ. փետրվարի 29-ի համեմատությամբ մեծ է 0.33 տոկոսային կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 9.52%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի, 2021թ. փետրվարի 28-ի և 2020թ. փետրվարի 29-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար՝ 0.41, 2.96 և 2.34 տոկոսային կետերով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 89.42%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի, 2021թ. փետրվարի 28-ի և 2020թ. փետրվարի 29-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 0.27, 3.1 և 2.67 տոկոսային կետերով:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2022-2024 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (2020-2022թթ. փետրվար ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2022-2024թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 8-11 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2022թ. փետրվարի 28-ի դրությամբ կազմել 8.31 տարի: Այս ցուցանիշը 2021թ. փետրվարի 28-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից պակաս է 0.11 տարով, իսկ 2020թ. փետրվարի 29-ի ցուցանիշից՝ 0.69 տարով;

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2022թ. փետրվարի 28-ի դրությամբ կազմել է 8.89%, որը 2021թ. փետրվարի 28-ի և 2020թ. փետրվարի 29-ի դրությամբ արձանագրված մակարդակներից փոքր է 1.59 և 5.46 տոկոսային կետերով:

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2022թ. փետրվարի 28-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 83.11%, լողացող տոկոսադրույքով՝ 16.89%: Ընդ որում, 2022թ. փետրվարի 28-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2021թ. փետրվարի 28-ի ցուցանիշoց ավել է 1.06 տոկոսային կետով, իսկ 2020թ. փետրվարի 29-ի ցուցանիշից պակաս է 0.77 տոկոսային կետով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 25.%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2022թ. փետրվարի 28-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 69.76%, ներքին պարտք՝ 30.24%: Ընդ որում, 2022թ. փետրվարի 28-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2021թ. փետրվարի 28-ի և 2020թ. փետրվարի 29-ի ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 6.87 և 6.7 տոկոսային կետերով: